Պրոբացիայի ծառայության մասին» օրենք

Հոդված 25. Պրոբացիայի ծառայության լիազորությունները

1. Պրոբացիայի ծառայությունը՝

1) ապահովում է «Պրոբացիայի մասին» օրենքով նախատեսված այլընտրանքային խափանման միջոցների կատարումը.

1.1) ապահովում է տնային կալանքի տակ գտնվող մեղադրյալների փոխադրումը.

2) ապահովում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված անվտանգության միջոցների կատարումը.

3) ապահովում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված՝ ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարումը.

4) ապահովում է իրավաբանական անձանց նկատմամբ նշանակված քրեաիրավական ներգործության միջոցի կատարումը.

5) տրամադրում է պրոբացիայի շահառուի վերաբերյալ զեկույցներ, ներկայացնում հաշվետվություններ և միջնորդություններ.

6) վերահսկողություն է իրականացնում պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ.

7) իրականացնում է հաշտարարություն.

8) իրականացնում է վերասոցիալականացման միջոցառումներ.

9) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

2.Պրոբացիայի ծառայության կողմից տնային կալանքի տակ գտնվող մեղադրյալների փոխադրման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամանով, իսկ փոխադրման դեպքերը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության և ներքին գործերի նախարարների համատեղ հրամանով: